



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԶԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ  
համայնք, գ. Սարչապետ, Հեռ. 077867459 , hhamaynq@list.ru

N 149-13  
17 դեկտեմբեր 2013թ.

**ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ  
ՄԱՐԶՊԵՏ  
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Կից ներկայացնում եմ Սարչապետ գյուղական համայնքի ղեկավարի թիվ 29  
կարգադրությունը, ղեկավարի թիվ 55-Ն և 56-Ա որոշումները, ավագանու թիվ 51-Ա, 52-Ն, 53-  
Ն և 54-Ա որոշումները իրենց հավելվածներով:

**Համայնքի ղեկավար՝**

**Բորիս Բարոյան**

Կատ.՝



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒԻ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, 077867459 hhamaynq@list.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2013թվականի N-51-Ա

ՀՀ ԼՈՒՈՒԻ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ԶԱՓԸ,  
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻՆ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՐԸ  
ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶՄՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետերով, <Իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով՝

Սարչապետ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Սարչապետ գյուղական համայնքի ղեկավարի վարձատրության չափի, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Սարչապետ գյուղական համայնքի ավագանու 2013թ.-ի դեկտեմբերի 17-ի <Սարչապետ համայնքի ղեկավարի վարձատրության չափի և Սարչապետի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին> թիվ-40-Ա որոշումը:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

2. ԲԱՐՈՅԱՆ ԱՐՓԻԱԲ

3. ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

4. ԴԱՎԹՅԱՆ ՀԱՄԼԵՏ

5. ՄԽՈՅԱՆ ԶԱՎԵՆ

6. ՏՈՒՏԵՅԱՆ ՅՈՒՐԵՍԵՐ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Բ.ԲԱՐՈՅԱՆ

Հավելված  
ՀՀ Լոռու մարզի Սարչապետ  
համայնքի ավագանու  
2013թ. դեկտեմբերի 16-ի թիվ 51-Ա  
որոշման

**ՍԱՐՉԱՊԵՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ  
ՉԱՓԸ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ  
ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ**

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 11
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը /դրույք/	Ամսեկան պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/
<i>Համայնքի ղեկավար</i>	1	175 000
<i>Համայնքի ղեկավարի տեղակալ</i>	1	97 000
<i>Համայնքի ղեկավարի օգնական</i>	1	100 000
<i>Աշխատակազմի քարտուղար</i>	1	132 000
<i>Գլխավոր մասնագետ</i>	1	120 000
<i>Առաջատար մասնագետ</i>	1	119 000
<i>1-ին կարգի մասնագետ</i>	2	97 000
<b>Տեխ. սպասարկման անձնակազմ</b>		
<i>Վարորդ</i>	1	68 000
<i>Հավաքարար</i>	1	60 000
<i>Մեքենագրուհի</i>	1	60 000

**ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

**Բ.ԲԱՐՈՅԱՆ**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, 077867459 hhamaynq@list.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

16 դեկտեմբերի 2013թվականի N-52-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2014  
ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶՈՓԵՐ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-կետով, <Տեղական տուրքերի և վճարների մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով և <Իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Սարչապետ համայնքի ավագանին *որոշում է*.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ գյուղական համայնքում 2014 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

2. ԲԱՐՈՅԱՆ ԱՐՓԻԱՐ

3. ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

4. ԴԱՎԹՅԱՆ ՀԱՄԼԵՏ

5. ՄԽՈՅԱՆ ԶԱՎԵՆ

6. ՏՈՄԵՅԱՆ ՍՈՒՍԵՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Բ.ԲԱՐՈՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ  
ՄԱՐԶԱՊԵՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2014  
ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ  
ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝
- 1) հիմնական օբյեկտների համար՝
- ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 4500 /չորս հազար հինգ հարյուր/ դրամ.
  - բ. սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետի 'ա' պարբերությամբ չնախատեսված օբյեկտների համար՝  
201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 9000 /իննը հազար/ դրամ.  
501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15 000 /տասնհինգ հազար/ դրամ.  
1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 21 000 /քսանմեկ հազար/ դրամ.  
3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50.000 /հիսուն հազար/ դրամ.
- 2) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝
- ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 900 /իննը հարյուր/ դրամ.
  - բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 /հազար հինգ հարյուր/ դրամ.
2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների(բացառությամբ Հայաստանի Հանրապետության

օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվությունն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով, տեղական տուրքը սահմանել՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 900 /իմնը հարյուր/ դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ 1500 /հազար հինգ հարյուր/ դրամ.

4. Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 7000 /յոթ հազար/ դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3000 /երեք հազար/ դրամ.

## 5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ 300 /երեք հարյուր/ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 12 000 /տասներկու հազար/ դրամ.

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար<sup>a</sup>

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում<sup>a</sup> 1000 /հազար/ դրամ.

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում<sup>a</sup> 500 /հինգ հարյուր/ դրամ.

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 25 000 /քսանհինգ հազար/ դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 /երկու հարյուր հազար/ դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 /հինգ հարյուր հազար/ դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 300 000 /երեք հարյուր հազար/ դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 /հարյուր հազար/ դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել<sup>a</sup>

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 /հազար/ դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3000 /երեք հազար/ դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ 500 /հինգ հարյուր/ դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար<sup>a</sup> 700 /յոթ հարյուր/ դրամ

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝ 2000 /երկու հազար/ դրամ:

Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ 50 000 /հիսու հազար/ դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ 5000 /հինգ հազար/ դրամ:

11. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու ավարտած շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝ 1500 /հազար հինգ հարյուր/ դրամ:

12. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման տեղական վճարը սահմանել՝ 1000 /հազար/ դրամ:

13. Համայնքի տարածքում տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ



կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից տեղական վճարը սահմանել՝ 1000 /հազար/ դրամ:

Սարչապետ համայնքի ղեկավար՝

Բ.Բարոյան

ղեկտեմբերի 2013թ.

16



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԶԱՊԵՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք  
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, 077867459 hhamaynq@list.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

16 դեկտեմբերի 2013թվականի N-53-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԶԱՊԵՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով՝ Սարչապետ համայնքի ավագանին *որոշում է*:

Հաստատել Սարչապետ գյուղական համայնքի 2014 թվականի բյուջեն՝ համաձայն հատվածների:

Կողմ՝ 6

Դեմ՝ 0

Ձեռնպահ՝ 0

1. ԱՎԵՏՅԱՆ ՆԱԶԱՊԵՏ

2. ԲԱՐՈՅԱՆ ԱՐՓԻԱԴ

3. ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

4. ԴԱՎԹՅԱՆ ՀԱՄԼԵՏ

5. ՄԽՈՅԱՆ ԶԱՎԵՆ

6. ՏՈՄԵՅԱՆ ՍՈՒՍԵՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎԱԳԱՐ՝

Բ.ԲԱՐՈՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք  
ՀՀ. Լոռու մարզ, գ.Սարչապետ, 077867459 hhamaynq@list.ru

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

16 դեկտեմբերի 2013թվականի N-54-Ա

**ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Սարչապետ համայնքի *ավագանին որոշում է:*

Տալ համաձայնություն Սարչապետ համայնքի ղեկավարին լրացուցիչ վարձատրություն տրամադրելու համար՝ մեկ ամսվա աշխատավարձի չափով:

Կողմ -6

Դեմ -0

Չեղնայտի -0

1. ԱՎԵՏՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

2. ԲԱՐՈՅԱՆ ԱՐՓԻԱՐ

3. ՂԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

4. ՂԱՎԹՅԱՆ ՀԱՄԼԵՏ

5. ՄԽՈՅԱՆ ԶԱԳԵՆ

6. ՏՈՄԵՅԱՆ ՄՈՒՍԵՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Բ.ԲԱՐՈՅԱՆ